Թիւ 18-Հրատարակութիւն Ս. Դ. Հնչ. Կուս. Ամբ. Գործ. Բանդ.

ԿԱՅԾ

Ս. Դ. ՀՆՉ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԻՑ

ԹՈՂ ՓԱՍՏԵՐԸ ԽՕՍԻՆ

ԳՐԵՑ՝
ՍՈԿՐԱՏ ԽԱՆ ԳԵԼՈՖԵԱՆՑ

ՆԻՒ ԵՕՐՔ, 1915

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏՊԱՐԱՆ
«ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ»ի
ՓՐԱՎԻՏԷՆՍ
1915

Թիւ-12-Հրատարակութիւն Ս. Դ. Հնչ. Կուս. Ամբ. Գրք. Յանձն.

ԿԱՅԾ

Ս. Դ. ՀՆՉ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԻՑ

ԹՈՂ ՓՍՏԵՐԸ ԽՕՍԻՆ

ԳՐԵՑ՝

ՍՈԿՐԱՏ ԽԱՆ ԳԵԼՈՖԵԱՆՑ

ՆԻՒ ԵՕՐՔ, 1915

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏՊԱՐԱՆ
«ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ»-ի
ՓՐԱՎԻՏԷՆՍ
1915

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ես մի քանի խօսքով պիտի բացատրեմ թէ ինչո՞ւ համար այս բրոշիւրը հրատարակեցի։

Վերջին տասը ամսուան ընթացքում, ուր հսմաբրոպական պատերազմի աշխարհակուլ հրդեհի մէջ նաև մի ափ Հայութիւնն իր մահուան դալարումների միջից ապագայ վերածնութեան յոյսերն է փնտռում, և արեան ճանապարհով դէպի այդ գերագոյն նպատակն է դիմում, ասում եմ հէնց այդ ճգնաժամում գտնւում են Հայ կեանքի մէջ այնպիսի հոսանքներ, որոնք իրենց «Եսից ու կուսակցական շահերից տարուած, մոռանալով նոյնիսկ իրանց վրայ առած յեղափոխական բարձր կոչումը և դէպի այդ կոչումը ունեցած նուիրական պարտականութիւնը, ոչ մի ջանք չեն խնայում զանազան անհիմն ու անմիտ հէքեաթներով պըղտորելու ժողովուրդի միտքը, մոլորեցնելու

Դրա գիտակցութիւնը և վատ ուրացումներով խախտելու Հայութեան ապագայ գոյութիւնը ապահովելու համար պահանջուած ներկայ ուժերի հաւասարաչիս գործակցութիւնը։

Այս տխուր երևոյթներից մէկն է այն ցաւալի հանգամանքը, որ Հ. Ց. Դաշնակցութեան զանազան հատուածները— նրանց ապակեդրոնացման և «անհատական հանգամանքով» գործելու սիստէմը թոյլ չի տալիս մեզ ասելու թէ Դաշնակցութիւնն է այդ տխուր հանգամանքի բուն հեղինակը—մանաւանդ Ամերիկայի շրջանը, կարծես թէ վճռել են ամէն տեսակ ներելի և աններելի միջոցներով ուրանալ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան գոյութիւնը, որը աւելի քան մի քառորդ դար Հայ կեանքի վերաշինութիւնով զբաղուելուց յետոյ, այսօր էլ միակ յեղափոխական կուսակցութիւնն է, որ շնորհիւ իր մաքուր անցեալի և զօրաւոր նկարագրի, առանց վերապահումների և զիկզակ ճանապարհներով քալելու, և առանց «աղգային» վարդոյրի ետևում ծածկուելու, ճակատաբաց, իր սեփական դրօշակը ձեռքին հաղարաւոր քաջամարտիկ զինուորներով արիւն է վաթում պատերազմի դաշտում և հայրենիքի փրկութեան սուրը իդէալով տարուած՝ խոյանում է դէպ Հայաստան։

Եւ օրովհետև մեր հակառակորդները յաճախ շեշտեցին թէ Ս. Դ. Հնչակեան Կու-

սակցութիւնը Կովկասում եւ գոյութիւն չի ունեցել, ուստի, ես յարմար տեսայ այս բրոշիւրով ապացուցել թէ՝ չէ թէ միայն Կովկասում Հնչակեանութիւնը գոյութիւն ունէր, այլ այդ՝ մի մասն էր այն Հնչակեան կազմակերպութեան, որը գիտէր անխոս ու անաղմուկ վճռել թագակիր բռնապետների բախտն անդամ։ Եւ այդ ապացուցելու համար ես բաւական տեսայ այս բրոշիւրի մէջ երեւան հանել Մահմանադրական Պարսկաստանի քաղաքական զօրաւոր կուսակցութիւնների, Անջումանների (Ազգ. Ներկայացուցչական ժողով), կուսակալների և նշանաւոր հերոսների ինքնագիր, պաշտօնական և կնքած վաւերաթուղթերը, որոնք հաստատում են թէ՝ Պարսկաստանի վերածնուրեան ծանր գործը կազմակերպեց եւ գործադրութեան մէջ դրեց Ս. Դ. Հնչ. Կուսակցութիւնը, Կովկասից սկսած մինչեւ Պարսկաստանի մայրաքաղաքը. իսկ այդ պաշտօնական վաւերագրերի բնագրերը, որոնք բոլորն էլ պարսկերէն լեզուով են գրուած, բացի Պետրոս Մելիք Անդրէասեանի ինքնագիր նամակը, որ հայերէն է, պատրաստ են և հարկը պահանջած ժամանակ մենք պատրաստ ենք նրանց լուսանկարները ես հրապարակ հանել, որ թերահաւատ Թովմասները գէթ այս անգամ խոստովանեն իրանց սխալը։

Իսկ թէ ինչո՞ւ ես Պարսկաստանի յեղափոխութիւնից միայն փաստ բերեցի, դրա պատճառն է նախ՝ այն որ Պարսկահայութիւնը իր տեղական քաղաքական գործունէութիւնը միշտ պատուանդան է դարձրել իր հայրենիքի, Հայաստանի ազատութեան և վերածնութեան գործին, և երկրորդ՝ որ մեր հակառակորդները յաճախ շեշտեցին թէ «Հնչակեանութիւնը Կովկասում գոյութիւն չունի», մինչդեռ Պարսկաստանի 1909 թ. ի յեղափոխութեան ծրագիրը պատրաստուեց Կովկասում, Հնչակեան Կուսակցութեան և «Էջմիածնի Ամիսուն» կուսակցութեան ձեռքով։

Իմ խօսքերիս ես կցել եմ նաև գործող դէմքերի լուսանկարները, որպէսզի Հնչակեան Կուսակցութեան գոյութիւնն ուրանալուց յետոյ կարելի չլինի ուրանալ նաև գործող անձնաւորութիւնների և պատմութիւնների մէջ տեղ բռնող որոշ դէմքերի գոյութիւնը։

Այս բրոշիւրով ես աշխատեցի երևան բերել ճշմարտութիւնը և այդ ձևով պարզել ժողովրդի միտքը։ Իսկ թէ իմ այս պարզախօսութեանս համար իմ գաղափարական հակառակորդների լրագրական լայն էջերը պիտի լեցուին լուտանքներով և ցարդ իրանց համար սովորական դարձած անլուր յիշոցներով, ուղղած իմ հասցէին, ինչպէս

այդ կատարում են նրանք այսօր, առանց քաշելու, ազատ են կրկնելու այդ և շարունակելու իրանց այդ պատաբեր ..... փեշակը ... որովհետև ես վաղուց է որ կռնակս եմ դարձրել այդպիսիներին։

ՍՈԿՐԱՏ Մ. ԳԵԼՈՑԵԱՆՑ

ՄԱՆՈՒԷԼ ՄՈՋԵՍԱՆ

Թէհրանի Ս. Դ. Հնչ. կազմակերպիչը
Սալարէս Դովլէի տէռօրը նախաձեռնելու համար իր ընկեր՝
Կազանճեանի հետ նահատակուեցին հրէշ Սալարէս Դովլէի
ձեռքով 1909 թ. Քիրմանշահ քաղաքում

ԿԱՅԾ

Ս. Դ. ՀՆՁ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԻՑ

ԹՈ՛Ղ, ՓԱՍՏԵՐԸ ԽՕՍԵՆ

Ազգերի և նոյնիսկ համաշխարհային պատմութիւնը միշտ հիմնուած է եղել այդ ազգերի մէջ գոյութիւն ունեցող՝ ընկերային կազմը բնաւրջման օրէնքի շաւղում շարժման մէջ պահող բացառիկ անհատների և կազմակերպուած հոսանքների կատարած մեծ ու փոքր գործերի ելքի և հետևանքի զանազան դարձուածների և երևոյթների վրայ, որոնք չէ թէ միայն ուրանալ չի կարելի, այլ որպէս կատարուած իրողութիւն՝ պէտք է ընդունել նրանց որպէս ընկերային կեանքի հիմքը:

Այն ազգը, կամ ազգի այն հատուածը, որ իր նիւթական կամ «եսի» շահի համար կը յանդգնի ուրանալ իր կեանքը կազմաւորող պատմութեան այսինչ կամ այնինչ մասը, կատարուած փաստերը և իրողութիւնները, այդպիսին չէ թէ դաւաճանում է իր անհատական ուրոյն գոյութեանը, այլ նոյն իսկ համամարդկային ամբողջութեանը, որովհետև այդպիսով նա ուրանում է ամբողջութեան՝ համաշխարհային պատմութիւնը:

Արևի նման պարզ ու պայծառ՝ այս ճշմարտութիւնը ընդունելուց յետոյ պիտի ասել թէ՝ հայերիս մէջ վերջերս սկսել է երևան գալ ընկերային կեանքի հիմնաքարը եղող պատմութեան և այդ պատմութիւնը հիւսող փաստերի և Հայկական յեղաշրջումների ուրացման տարօրինակ հիւանդութիւնը, ամենածանր ախտը...

Մէկ կողմ թողնելով Հայ ազգի անցեալ պատմութիւնը, որ հիմնուած է սոսկ անտեսական և քաղաքական բռնի դարձուածների կամ ընաշրջման ճանապարհով երևան եկած իրողութիւնների վրայ, մենք կարող ենք վեր առնել մեր ժամանակակից անցքերը և պատմութեան ընթացիկ վիճակը։

Վերջին երեսուն տարուայ ընթացքում Հայութիւնն ունեցել է այնպիսի՛ մի փոթորկալից կեանք, որի ամեն մի բոպէն և ամեն մի մանրերկրորդը, կարող է այդ ազգի պատմութեան չինութեան համար մատակարարել անթիւ ու անհամար վաստեր ու կատարուած իրողութիւններ։ Փաստեր, որոնք այդ ժողովուրդի թշուառութեան այգանցից ծնած յեղափոխութեան չինարար քայլերի մասին են խօսում ու պիտի արձագանքեն համամարդկային կեանքի անհուն տարածութեան մէջ մինչև աշխարհին վերջը։ Հայ պատմութիւնը կազմաւորող փաստեր, որոնք ծնունդ են եղել անդրանիկ Հայ յեղափոխական կուսակցութեան, Հնչակեանութեան երեսունամեայ գործունէութեան ու նրա հերոսական կեանքին։ Այս բոլորն այնպիսի իրողութիւններ են, որոնց առաջ Եուդաներն անգամ պիտի զինաթափուին։ բայց ինչպէս տեսնում՝ ուրացումի տարօրինակ մի ախտ է, որ վերջերս որոշ հոսանքի սակրոնների ծուծն անգամ վարակելով անեղի և ան-

կարելիորէն ձգտում է ուրանալ Հայ ազգի նորագոյն պատմութեան ամենազօրաւոր սիւներից զօրաւորը, Հնչակեան Կուսակցութեան գոյութիւնը և նրա երևան հանած պատմական այնքան թանկագին փաստերը։ Ուրանալ ազգի պատմութիւնը, նշանակում է ուրանալ ազգի գոյութիւնը։ Բայց այս անխոհեմ և չար նախանձով տոգորուած ուրացումը այսօր կատարւում է Հնչակեան Կուսակցութեան հակառակորդների կողմից և այն էլ առանց խղճի խայթի... Այդպիսի մի հոսանքի բարոյական որակումը և նրա դատավճիռը թողնելով մեր պատմագիրներին, մենք պիտի երևան դնենք մի քանի զրաւոր վաւերաթղթեր, որոնք պիտի ապացուցեն թէ իսկապէս Հնչակեան Կուսակցութիւնը գոյութիւն ունեցել է, ունի եւ դեռ պիտի ունենայ։ Այս պարտականութիւնը մենք խղճի կատարեալ հանգստութեամբ պիտի կատարենք այսօր, իմանալով միևնոյն ժամանակ, որ մեր հակառակորդները այսպիսի անհերքելի փաստերի և փայլուն ճշմարտութիւնների առաջ պիտի բաւականանան մեր անհատական արժանապատուութիւնը հրապարակ քաշող հայհոյանքներով, անլուր լուտանքներով և ասիական կրքոտ յարձակումներով պատասխանելով... բայց հոգ չէ որովհետև մենք վաղուց է, որ մեր կոնակն ենք դարձրել այդ դատակարգի հակառակորդներին... թող հայհոյէն որչափ կուզեն և ուրանան նոյնիսկ աշխարհի գոյութիւնը, բայց հսկայ Հնչակեանութիւնը իր լուս ու մունջ, խաղաղ ու անաղմուկ գործունէութեամբը կգրաւի իր ազգի և համաշխարհային պատմութեան մէջ իր յինարար բաժինը բերելու։

Թէ Հնչակեան Կուսակցութիւնը գոյութիւն ու-

նեցել և այնքան զօրաւոր եղել է, որ իր ազգային կեանքից դուրս զբաղուել է նաև իր բախտակից ժողովուրդների, ասենք Պարսիկների նորագոյն պատմութիւնը չինելու և նրա ընկերային կազմը բարեփոխելու, բաւական է վերառնենք 1908 թ. ից պարսկական շարժումը և այստեղ երևան դնենք այդ շարժման հետ կապուած մի շարք փաստաթղթեր։

1908 թ. ին, երբ Պարսկաստանը Մուհամմէդ Ալի Շահի միապետական բռնութեան դէմ ծառացաւ և վճռեց ժողովրդական թափով վերարձել տալ Ազգային Մէջլիսը— ներկայացուցչական ժողովը—, այդ ժամանակ Պարսիկ քաղաքական կուսակցութիւններից ամենազօրաւորը՝ «Էջթիմաիուն Ամիուն» կուսակցութիւնը Կովկասի մէջ մեր հակառակորդների «գոյութիւն չի ունեցել և չունի» յայտարարած — Հնչակեան կուսակցութեան հետ կնքում է այն պատմական դաշնաթուղթը, որի թարգմանութիւնը ես կէտ առ կէտ և նոյնութեամբ առաջ պիտի բերեմ այստեղ։

«Դաշնաթուղթ»

«Մենք Պարսիկ մուջահիդներս (կուռդ) այն է, Էջթիմաիուն Ամիուն կուսակցութիւնս Հնչակեան կուսակցութեան հետ ներկայ դաշնագրով պայմանաւորուեցինք և ուխտեցինք, որ այս թուականից յետոյ միացած ոյժերով աշխատենք և հարկ եղած զոհողութիւնները կատարենք Պարսկաստանի սահմանադրութեան հաստատութեան համար, և այս ուղղութեամբ առնելիք բոլոր քայլերը պիտի լինեն Հնչակեան կուսակցութեան համաձայնու-

թեամբ ու նրա հետ միասին հետևեալ պայմաններով։

Ա.— Երկու կուսակցութիւններս էլ պիտի կանգնած մնանք Սոցիալ Դեմոկրատ սկզբունքների և ծրագրի վրայ։

Բ.— Պարսկաստանի նկատմամբ առնելիք բոլոր քայլերը պիտի լինեն երկու կուսակցութիւնների կատարեալ համաձայնութեամբ։

Գ.— Պարսկաստանի գործերին ուղղութիւն տալու և այնտեղ կատարելիք բոլոր գործողութիւնների համար որոշում պիտի տրի միացեալ և խառն ժողովներում, ուր ներկայ պիտի լինեն երկու կուսակցութիւնների լիազօր ներկայացուցիչները։

Դ.— Հնչակեան կուսակցութիւնը յանձն է առնում խառն ժողովների որոշումների հիման վրայ, Պարսկաստանի շարժման յաջողութեան համար տալ հարկաւոր եղած ռազմական, նիւթական ու ֆիզիկական ուժերը, որ է զենք, փող ու կռող ուժեր։

Ե.— Դրամական նպաստները պիտի հաւասարեն երկու կուսակցութիւնների գիտակցութեամբ ու համագործակցութեամբ։

Զ.— Երկու կուսակցութիւնների (Պարսկաստանի շարժման համար) ժամանակաւորապես գումարները պիտի ծախսուին խառն ժողովի ձայներով մեծամասնութեան որոշումով միայն։

Է.— Դրամական գործառնութիւնները պարզ ու մաքուր պահելու համար երկու կուսակցութիւնները ևս պիտի պահեն օրինաւոր հաշուետոմարներ։

Ը.— Հնչակեան կուսակցութիւնը խոստանում է Պարսկաստանի նկատմամբ, խառն ժողովի որոշմամբ հարկ եղած բոլոր օգնութիւնը հասցնելով

տալ նաև անհրաժեշտ գործիքները— զէնքերը։

Թ.— Պարսկաստանի կեանքին վերաբերեալ որ և է թերթ, քաղաքական ծրագիր և գրականութիւն երևան պիտի գան երկու կուսակցութիւնների համաձայնութեամբը։

Նոյեմբեր 27, 1908 Էջմիածնի Ամիսնի
Զիլգադէ 16, 1326 (Կնիք...)

Այս գաշնաթուղթը կնքելուց 25 օր յետոյ, այն է 1908 թ. Դեկտ. 20ին, Թիֆլիսում «Էջմիածնի Ամիսն» կուսակցութիւնը յանձնում է Հնչակեան ժարմնի մի ստացական, իր ստացած ... անտուկ զէնքերի համար, որի մանրամասնութիւնը հրապարակ հանել չկարողանալուս համար, ես նրա վերնագիրը և վերջաբանը կտամ այստեղ թարգմանաբար, ապացուցելու համար որ «զոյութիւն չունեցող» Հնչակեանութիւնն էր որ լուռ ու մունջ, անխօս ու անաղմուկ կերպով վարում էր Պարսկաստանի շարժումը մինչև այն ատենն, որ այդ շարժումը չէր մտել թալանչիութեան անարգ սահմանների մէջ։

«Ծուցակ . . . . անտուկ ապրանքների (զէնքն է ակնարկւում), որ Հնչակեան կուսակցութիւնից ստացաւ Պարս. Մուջահիդների կուսակցութիւնը։

. . . . . .

. . . . . .

Վերոյիշեալ առարկաները Հնչակեան կուսակցութեան կողմից Դ. ի և Մ. ի ձեռքով յանձնուեց Պարսկաստանի Մուջահիդների կուսակցութեանը, որի

տացման համար յանձնուում է սոյն վաւերաթուղթը։»

Ի Դիւանց Էջմիածնի ամիսուն կուս.
Թիֆլիսի Գործ. Յանձնախումբ

Դեկտ. 20, 1908 (Կուսակ. Կնիք)

Այսպէս, «գոյութիւն չունեցող» Հնչակեան կուսակցութիւնը իր գործակցութիւնով և կնքած դաշնաթուղթերով հիմքն էր դնում Պարսիկ միապետութեան տապալումին և Սահմանադրութեան վերահաստատութեանը, մինչդեռ հէնց այդ ժամանակ Թաւրիզում տեղի ունեցած համազգային մի ժողովի մէջ Հ. Յ. Դաշնակցութիւնը հրապարակաւ յայտարարում էր թէ՝ ինքը չպիտի խառնւի պարսկական շարժման մէջ, այլ պիտի բաւականանայ լոկ ազգային ինքնապաշտպանութեան ծրագրով և հէնց այդ ուղղութեամբ էլ սկսում է հակայական հանգանակութիւններ և դրամահաւաքութիւններ կատարել։ Չնայած այս վիճակին Հնչակեան կուսակցութիւնը Թաւրիզի համազգային ժողովի մէջ յայտարարում է թէ՝ ինքը որոշել է գործնականապէս մասնակցել հակամիապետական շարժմանը այնքան ժամանակ, որքան որ այդ շարժումը իր ընթացքով, նպատակով և ելքով կարող է համապատասխանել ժողովուրդի և մասնաւորապէս Հայութեան կեանքին։

Այս հանգամանքների հետ միաժամանակ «Էջմիածնի Ամիսուն» և Հնչակեան կուսակցութեան Կովկասի խառն մարմինը բանակցութեան մտաւ տեղական Ռուս Ս. Դ. բանւորական կազմակերպութեան հետ, որը շուտով Ռաշտ քաղաքն ուղարկեց 23 հոգուց բաղկացած Վրացի Վալիքոյի խում-

բը, կատարելապէս զինուած նորագոյն զէնքերով և ռազմական մեծ պաշարով միասին։

Հասնելով Լենգէլի և Ռաշտ Վրացի Ս. Դ. Խումբը, հասկացողութեան եկաւ տեղական Հնչակեան մարտական խմբի հետ, որը զինուած էր տեղական միջոցներով, իսկ Կովկասից եկած Հնչակեան . . . սնտուկ զէնքերով «Լէջիմաիունի Ասիունը» զինեց Պարսիկ Մուջահիդների զօրաւոր մի խումբ։ Այս դեռ ոչինչ, մեր ձեռքում եղած վաւերաթղթերից մէկը Պարսիկ Դեմոկրատ կուսակցութեան կողմից ստորագրուած՝ ասում է «. . . համաձայն թէհրանից հասած հրահանգներին, Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան Լենգէլու մասնաճիւղը չդադարեցաւ մեր կոմիտէին տալ . . . հատ ռումբեր, որի դիմաց մեր շնորհակալութիւնն ու երախտագիտութիւնը յայտնելով, ի դիմաց Դեմոկրատ կուսակցութեան

Ստորագրում եմ»

ԷՄԻՐ ԽԱՆ

Այս նշանակում է, ուզում եմ ասել որ պաշտօնական վաւերաթղթերը ի լուր աշխարհի յայտարարում են թէ՝ «գոյութիւն չունեցող» Հնչակեան կուսակցութիւնը, թէև լոկ մնջիկ, բայց և իր քաղաքական գործունէութեան և ազգային վերածնութեան հարցում այնքան հեռատես և զգաստ էր, որ չուշացաւ իր ազգային հատուածական ազատ գոյութեան ապահովութեան տեսակէտով լուրջ և գործնական հողի վրայ դնել Պարսկաստանի չարժումը, ուր հարիւր հազարների հասնող հայութեան ազատ ապագան պատանդանը պիտի դառնար մայր

ՍԻԼԻՎԱՆ ԱԼԵՔՍԻԵՎ ԻՎԱՆՈՎԻՉ

1909 թ.ի Յունվար 26ի Թաւեռում ապստամբութեան գլխաւոր, Վրացի Վալիկօի նկարն է, որ 16 տարուան տժանակիր աշխատանքի դատապարտեց նոյն տարւայ Սեպտեմբեր 26ին։

երկրի հայութեան ազատագրութեան հսկայ գործին, և այս ձևով նաև իր մէջ առաւ «Էջմիածնի Ամիսն» կուսակցութիւնը, զինեց նրան, պայքարի մէջ մղեց գաղափարակից Ս. Դ. Վրացիութիւնը և նոյնիսկ ռազմական օգնութիւն հասցնելով Պարսկ. Դեմոկրատ կուսակցութեանը։

Այս պատմական իրողութիւնը մեր խօսքովը չէ որ երևան է գալիս, այլ Պարսիկ կազմակերպութիւններն են ասում իրանց գրաւոր, կնքած ու ստորագրած վկայագրերովը։

1909 թի Յունվար 26ին տեղի է ունենում յեղափոխականների յարձակումը Ռաշտի կառավարական պալատի վրայ։ Շարժումը ղեկավարում է վրացի Ս. Դ. խմբապետ Վալիքոյի և Էջմիածնի Ամիսն խմբապետ՝ Հասէյն Խան՝ Քասմէու ձեռքով, ուր մասնակցում են պարսիկ Մուջահիդները, Վրացի Ս. Դ. մարտիկներ և Հնչակեան զինուորներ։ Սպանուում է Նահանգապետ Սարդար Աֆխամը քաջարի վրացի Վառլամի ձեռքով և պալատը՝ հակառակ իր ցուցադրած դիմադրութեան՝ ընկնում է յեղափոխականների ձեռքը։

Կառավարական պալատը գրաւելուց յետոյ, կուռղների մէջ նկատուում է Եփրեմը երեք հոգի իր զինակիցներով։ Եփրեմի ձեռքումն է լինում Կարապետ Մարտիրոսեանի մոզեռ հրացանը, մի բան, որ հաստատուում էր թէ՝ նա չէ թէ միայն անպատրաստ էր յարձակմանը մասնակցելու իր կամ իր կուսակցութեան զէնքերովը, այլ նոյնիսկ լուր չունէր ծրագրուած յարձակումից և յարձակման միջոցին նա Կարապետ Մարտիրոսեանի տնում թէյխրժելիս է լինում և երբ հրացանների համազարկի ձայնն է լսում, տանտիրոջ հրացանը առնելով փո-

Ս Դ. ՎԻՐԱՑԻ ՎԱՌԼԱՄ

Ռուսի նահանգապետին զնդակահարող հայերի ղեկավարը

զոց է ընկնում տուն հասնելու, բայց կառավարա-
կանների կողմից տեղացող գնդակների առաջ կանգ
առնելով, Յորդանանեան դպրոցի անկիւնից և կա-

ՍՈՒՓԻՀԱԴԱՐ

Ընդհանուր Հրամանատար յեղափոխական բանակի

ռավարական պալատի կոնակի կողմից սկսում է կրակել իր օգնութեան հասած երեք ընկերների հետ միասին ու այսպէսով նա տարուում է հոսանքի մէջ։ Իսկ թէ ինչո՞ւ համար ու ի՞նչ հանգամանքների տակ էր, որ Եփրեմը «ԵՓՐԵՄ» դարձաւ և Հ. Բ. Դ.ն հետ սկսեցին միմեանց չահագործել, թերևս այդ մասին խօսելու առիթն ունենամ ես մօտ ապագայում, քանի որ այժմ այդ նիւթի վրայ խօսելը դուրս է իմ նպատակից։

Իրաւեց կառավարական պալատը և նոյն գիշերուան մթութեան մէջ Սարդար—Սֆխամի ահագին զինարանը գատարկելով մեծ մասա՛ր սահեց դէպ «ազգային ինքնապաշտպանութեան» ախոյեանների տունը. . . ։

Ռաչտը գրաւելուց յետոյ յեղափոխականները նահանգապետութեան պաշտօնը յանձնուում են Սուփէհտարին և կազմում են զինուորական մի յանձնախումբ, որն իր վրայ է առնում քաղաքի պաշտպանութիւնը ինչպէս նաև զինուորական կազմակերպութեան և արշաւանքի ծանր գործը։

Որոշւում է նախ՝ Մանջիլի կամուրջի վրայ դիրքեր գրաւել, արքայականների դէմ պաշտպանուելու համար և ապա պատրաստութիւն տեսնել Թէհրանի վրայ արշաւելու։

Արշաւախումբը պատրաստում է եօթը խմբերից խմբապետութեամբ 7 խմբապետների և ընդհանուր հրամանատարութեամբ Սուփէհդարի։ Այդ խումբերն են՝

1. — Ս. Դ Վրացիների խումբը՝ 23 հոգի, զինուած իրանց միջոցներով, խմբապետութեամբ Վալիքոյի։

2. — Ս. Դ Հնչակեան խումբը՝ 21 հոգի, զին-

ւած կուսակցութեան միջոցներով, իմբաղեաւ-թեամբ Պետրոս Մելիք Անդրէասեանի։

3.— Էջմիածնոյն Ամիրն, 50 հոգի, դինուած

ԵՓՐԵՄ եւ կիները՝ ԱՆԱՀԻՏ

Պարսկաստանի յեղափոխութիւնը սկսելուն . . .

Հնչակեան զէնքերով, խմբապետութեամբ Հիւսէյն Խանի։

4.— Հ. Յ. Դ. խումբը, 17 հոգի, զինուած իրանց միջոցներով և կառավարական պայատից գրաւուած զէնքերով, խմբապետութեամբ Նփրեմի.

5.— Սաթարական խումբը, 45 հոգի։

6.— «Բարկ» խումբը 46 հոգի:

7.— Կովկասեան թիւրքերի խումբը:

Բացի եօթը խմբերը, կային նաև կուռդների անագին բազմութիւն, որոնք գանուում էին ուղղակի Մոխլէ Սուլթանի հրամանատարութեան տակ։ Արշաւող բանակը բաղկանում էր 1500ի չափ կուռդներից։

Զինուորական գործողութիւնները պիտի վճռուէին եօթը խմբապետների կողմից և ընդհանուր հրամանատարից վաւերացուելով գործադրութեան դրուէր։

Բանակը շարժուեց դէպ Թէհրան։ Ղազուին չհասած սրի քաշուեց Նաֆքի գիւղի անագին բնակչութիւնը։ Այստեղ կատարուած հակայեղափոխական արատաւոր գործերը առիթ տուեցին վերջի խմբապետին բողոքելու։

Նաֆքիից յետոյ հերթը հասաւ Ղազուին յաղաքին, որի գրաւումից յետոյ Շէյխ ի-լ Իսլամի տան քանդումն, կողոպտումը և շատ ուրիշ նշանաւոր մարդկանց կողոպուտ և բարբարոսաբար խոշտանգում, «ալան-թալան» և ընդհանրապէս հակայեղափոխական անարգալից երևոյթները, որոնք ի կատար էին ածուում յեղափոխական նեիրական գործը վանդալիզմի փոխող, անհատների և խմբերի ձեռքով, զզուեցնելով վրացի Ս. Դ. մարտիկներին պատճառ է դառնում, նրանց հեռացումին այդ արշա-

1- ԳՐԻՇԱՅ, 2-_ՊԵՏՐԱՅ, 3- ՍԻՇԱՅ, 4- ՄԻՇԱՅ ՀՐԻԱՅ, 5- ԵԱՇԱՅ ԴԱՏԱՒՈՐԻ ՍՊԱՆՈՂ ԽՄԲՈՒՄ

Ս. Դ. Ռ. Բ. Կուս. պատկանող Վրացի Վալիկոյի խմբի մի մասը, որ Ղազվինից վերադարձաւ։

ւանքից, որից յետոյ վրացի խմբապետ Վալիքոն Ռաչուում հրապարակաւ արտասանած իր բողոքի ճառին մէջ յայտարարեց թէ՝ ես գերադաս եմ համարում Ռուսական կախաղանը այստեղի յեղափոխութիւնից, որովհետև այստեղի միապետութեան աւերակների միջից, յեղափոխութեան անուան տակ սկսել են երևան գալ հարիւրաւոր բռնապետ Մուհամէդ Ալի շահեր, որոնք պան-թուրանի և անարգ կոզոպուտի ճանապարհով են աշխատում բարձր դիրքերի և պաշտօնների հասնել. . . :

Եւ իսկապէս այս մաքուր ու անարատ իդեալիստն իր խմբով վերադարձաւ Ռուսաստան և մահուան դատավճիռը ստացաւ, որը ապա փոխուեց 16 տարի տաժանակիր աշխատանքի։

Վալիքոյի բողոքի հիման վրայ, յանդիմանութեան նամակներ ուղարկուեցին Հնչակեան խմբապետ՝ Պետրոս Մելիք Անդրէասեանին իր ընկերների կողմից և միևնոյն ժամանակ նրան հրահանգ տուեց նախ՝ հեռու պահել Հնչակեան զինուորներին տիրող պան-թուրանի անարգ հոսանքից, երկրորդ՝ թէհրանի գրաւումից և սահմանադրութեան վերահրոչակումից յետոյ դադարել ոչէ զինուած գործունէութիւնից ցնոր անօրինութիւն և երրորդ՝ հաւաքել Հնչակեան կուսակցութեան զէնքերը։

Այս հրահանգը չէր կարող շատ էլ դիւր գալ Պետրոս Մելիք Անդրէասեանին, նախ՝ որովհետև կոզոպուտի քաղցր հովերը նրան ևս քշել տարել էին և երկրորդ՝ նա կառավարութիւնից ստացել էր Կովկասեան սահմաններում Հնչակեան կամաւորներով հսկելու իւղալի մի առաջարկը, որի համար 30, 000 թիւմէնի կանխիկ մի բիւդջէ էր պատրաստուել նրա համար, սակայն տեղական Հնչակեան Գոր-

ծաղիր Մարմինը մերժել էր այդ առաջարկը այն առարկութեամբ, որ որպէս Սոցիալ Դէմոկրատ Հընչակեան կուսակցութիւնը չպիտի ընդունէր ոստիկանի դեր կատարել և թէ նա պիտի բաւականանար միապետութեան տապալումով և Սահմանադրութեան վերահաստատումովը, որից յետոյ Հնչակեան կուռող ոյժերը պիտի զինաթափուէին և խաղաղ գործունէութեամբ պիտի ապահովէին ընդհանուր Պարսկաստանի հետ նաև Պարսկահայութեան վիճակը։

Այս որոշումներն ու այս ուղղութիւնը կողոպուտի քաղցրութիւնը ճաշակած Պետրոս Մ. Անդրէասեանի քիմքին հաճելի չգալով որոշում է Հընչակեան կուռող ոյժերը իրանց զէնքերովը թողնել Եփրեմի տրամադրութեան տակ. . . և Թաւրիզի աքսիզային վերատեսչութեան պաշտօնով անցնել Թաւրիզ։ Տեսնենք թէ ի՞նչ է ասում խմբապետ Պետրոսն իր ինքնազիր նամակով, իր դաւաճան քայլը արդարացնելու նպատակով, նամակը առաջ պիտի բերեմ առանց փոփոխութեան։

Թէհրան, 11 Յուլիս 1909

Սիրելի . . . . ն

Ինձէլում

«Ձեր մի նամակը ստացել եմ, ուղղակի իմ գարմանքս եմ յայտնում ձեզ՝ որ . . . ես միշտ էլ ընդհարումների մասին մանրամասնութիւններ տուել եմ Ռաշտի վարչութեանը և տեղիդ վարչութեան, որ դակլատներ (տեղեկագիր) չեմ տուել այն պատճառաւ, որ դուք միմեանց հետ կապակցութիւն ունէք և ձեզ լուր կտան։ Ղազինում ձեր չնորհա-

ւորական հեռագիրը ստացայ, ցաւում եմ որ առանձին նամակով չեմ կարողացել շնորհակալութիւն անել։ Սակայն Ռաշտի վարչութեան նամակում յայտնել եմ, իմ կողմից շնորհակալութիւն յայտնել ձեզ և ընկերներին։

«Թէհրանից ձեզ հեռագրեցի 4-ին հետևեալը։

«Բ . . . Թէհրանը գրաւեցինք, Շահը գահընկէց, լաւ ենք»։

«Պատասխան—շնորհաւորական հեռագիրը ստացայ ձեր և ընկեր Ս . . . ի ստորագրութեամբ, շնորհակալ եմ։

«Ռաշտից մինչև Թէհրան հայ զոհերի թիւը 8 է, 20ի չափ էլ վիրաւորներ կան, որոնք անվտանգ են այժմ։ Թուրք յեղափոխականներից սպանուած և վիրաւորուած կը լինին ոչ աւել հայերից, երեք հոգի էլ վրացի է սպանուած։ Իսկ կառավարականներից սպանուածների թիւը մեծ է»։

«Մինչև Թէհրան 10 ընդհարում է եղել։ Ղազուինը տևել է 18 ժամ, իսկ Թէհրանը 4 օր և գիշեր է տևել, իսկ մնացած 8 ընդհարումները եղել է Ղազուինի և Թէհրանի շրջականերում, որը տևել է 3 ժամից մինչև 10 ժամ։

Սուլթան Ահմադ Միրզան գահ բարձրացաւ Յուլիս 8ին։ Երկու օր Թէհրանում մնալուց յետոյ գնաց Սալթանադ-Արադ, իր ամարանոցը։ Իսկ նրա հայր՝ գահընկէց հրէշը Ռուսաց դեսպանատունում նստած է և չուտով կը մեկնի։ Բոլոր ռազմամթերքը ժողովուրդի ձեռքումն է։ Ժողովուրդի արամադրութիւնը բաւական լաւ է։ Տեղիս մեր ընկերները լաւ ժամանակութիւն ցոյց տուին։ Մ . . . ը այստեղ է և շատ լաւ է։ Մանուկը (Մոզեանը) մի քանի հոգով ուրիշ տեղ է գնացել։ Թէհրանի կուի

օրերում նրան երկու անգամ տեսել եմ։ Ի . . . էլ այստեղ է, ընկերները ողջ և առողջ են, ես էլ մինիստրութեան կոմիսիոնի ցանկում (պատերազմական կոմիսիոն) անդամ եմ ընտրված, մի հայ էլ կայ Մատթէոս Խան Մելիքեան անունով։ Լաւ գործում ենք, բայց ափսոս, որ ես երկար չեմ կարող մնալ, որովհետև ուզում եմ մեկնիլ դէպ Թաւրիզ

ՊՕՏՐՈՍ ՄԵԼԻՔ ԱՆԴՐԻԱՍԵԱՆ

Ս. Դ. Հնչ. Կուսակցութեան Պարսկաստանի Մարտական խմբի խմբապետը, որ Ռուսաց հրամանով Թաւրիզում կախուեց որպէս դաւճակցական

Զանջանի վրայով։ Եթէ մինչև իմ գնալս մեր զինուորները զինաթափ չեղան, մնացին զենքի տակ, զենքերի ստանալը կը յանձնեմ այսեղի ընկերներին որ սատանան։ Հայ զինուորի մեծ կարիք է զգացուած։ Մեզ թոյլ չեն տալիս գնանք։ Հայերի վարկը երկինք է բարձրացել։ Կոզակներից սատցուած է ամեն ռազմամթերքը, մի քանիսի մօտ կան զէնքեր, որոնք պիտի մնան։ Ռոճիկները աւելացրել են և մնում են ծառայութեան մէջ»։

«Մեր մէջ պատերազմի դաշտում չէ եղել կուսակցական հարցեր, բոլորս էլ հաւասար իրաւունքներ ենք վայելել Եփրեմի հետ, որին մինչև այսօր ոչ ոք ձեզանից չի ճանաչել, կարծում եմ բաւական է որքան նեղ և թթու կուսակցական հայիւներով զբաղուեցինք։ Բաւական է որքան միմեանց բամբասեցինք, հիմա ձեռք ձեռքի տուէք, հայրենիքի համար մտածէք և համերաշխ գործէք։ Մենք եթէ համերաշխ չլինենք Պարսկաստանում ոչ մի գործ չենք կարող առաջ տանել, մի բուռ հայերս պիտի համերաշխ լինենք, որ կարողանանք 15 միլիոն պարսիկների մէջ մեր ձայնը մի տեղ հասցնել»։

«Ընկերական սիրալիր բարևներով բոլոր ընկերներին և ընկերուհիներին»։

Պետրոս Մելիք Անդրէասեան

Վերև առաջ բերուած ինքնագիր նամակի ոճը և ոգին պարզ ասում է նախ՝ որ նա գրուած է Հընչակեանի կողմից Հնչակեան մարմնին ուղղուած, երկրորդ՝ որ Հնչակեան կազմը նրանից՝ Մելիք Անդրէասեանից պահանջած է եղել իր զինուորների զինաթափութիւնը և զէնքերի վերահաւաքումը, իսկ երրորդը՝ որ Հնչակեան խմբապետը ինչ որ բարո-

յական ճնշման տակ պատրաստուել է լքել իր պարտականութեան ու կոչման ասպարէզը, ինչ որ փայլուն յոյսի համար, որի պատճառով նա բաներ չի գտնում գովաբանելու իր գաղափարի հակառակորդին . . . և յաջորդող հանգամանքներն ու իրերաբարձերը եկան ապացուցելու թէ՝ «գոյութիւն չունեցող» Հնչակեան կուսակցութիւնը զինուած ոյժով Պարսից գահի առաջ կանգնելով, թագը մէկ գլխից միւսի վրայ տեղաւորեց և Սահմանադրութիւնը վերահաստատելուց յետոյ, պահանջում է իր կուռ ոյժերի զինաթափութիւնը և զէնքերի հաւաքումը, սակայն նրա խմբապետ՝ Պետրոս Մելիք Անդրէասեանը իր զինուորներն ու կուսակցական զէնքերը թողնելով Եփրեմի ձեռքում, նրանց փոխարէն ընտանում է Թաւրիզի աքսիզային ընդհանուր վարչապետի պաշտօնը և Թաւրիզում երևան է գալիս որպէս Դաշնակցական . . . Այս տգեղ երևոյթն ըստ ինքեան բացատրւում է, և մեր կողմից պարզաբանելու հարկը չի տեսնւում, միայն այսքանը պիտի ասեմ, որ 1911 թ.ի Դեկտեմբեր ամսում, գրեթէ 40 օր առաջ քան իր կախաղան բարձրանալը, Պետրոս Մելիք Անդրէասեանը, Թաւրիզ քաղաքում ու Ռ. Մ.եանի տնում ներկայացուց ինձ, որին հարցրեցի թէ՝ ինչու նա փոխեց իր կուսակցական ուղղութիւնը։ Նա ինձ պատասխանեց թէ՝ «ես իմ կուսակցական կեանքի ընթացքում միայն Եփրեմին տեսայ որպէս մաքուր յեղափոխական և այդ պատճառով փոխեցի իմ ուղղութիւնս». «սխալ ես — պատասխանեցի ես— միակ պատճառը քո արդի պաշտօնդ է և հարստանալու ցանկութիւնը»։ Այս հարց ու պատասխանից յետոյ Պետրոսից հարցրեցի թէ՝ «ի՞նչ արեցիր Հնչակեան զէնքը և զինուորնե-

ը», նա ինձ պատասխանեց թէ՝ «ինքը թողել էր Եփրեմի ձեռքում, որ յանձնէ Հնչակեան կուսակցութեան»։ «Բայց գիտե՞ս, որ դու Հնչակեան կուսակցութեան առաջ ծանր պատասխանատուութեան տակ ես և այդ պատճառով քսակ ստեանի առաջ պիտի ներկայանաս»— ակնարկեցի ես։ Դառն ժըպիտը երեսին «այո՛», պատասխանով հեռացաւ նա և... ի ցաւ իմ սրտիս, քանի մը օրից յետոյ նա կախաղան բարձրացաւ ռուս զինուորական ատեանի հրամանով։ Եւ երբ նա ինքզինքը ազատելու համար ռուս սպայակոյտի առաջ յայտարարեց թէ՝ ինքը Դաշնակցական չէ այլ Հնչակեան, այն ժամանակ սեղանի վրայ դրուեց նրա և Եփրեմի միջև կատարուած նամակներն ու թղթակցութիւնները և անդարձ կերպով վճռուեց նրա մահավճիռը, մի բան, որ ամենածանր կերպով խոցեց իմ հոգիս և զգացումներս։

Իմ նպատակս չէր Պետրոսի նահատակութիւնը խծբծել, այլ նա ըստ ինքեան մէջտեղ քաշուեց, որովհետև որպէս Հնչակեան խմբապետ՝ նա իր կեանքով և գործերովը կապուած էր Հնչակեան կուսակցութեան հետ և նրա ինքնագիր նամակն ու յայտնած կարծիքը գալիս էր ապացուցելու, որ իր վերջին օրերի Դաշնակցական ընկերների բռնած դիրքը, այսինքն՝ ուրանալ Հնչակեան անցեալն ու ներկայ գոյութիւնը սխալ և անհիմն է։

«Գոյութիւն չունեցող» Հնչակեան կուսակցութեան ակտիւ և զինուած մասնակցութեամբ, նրա նախաձեռնութեամբ ու ահագին քանակութեամբ զէնքի և զինուորի զոհողութեամբը Ռաշտից շարժած արշաւական հակայական ալիքները Իրանի մայրաքաղաքը հասնելով տապալեցին միապետութիւնը,

նրա փոխարէն երևան դնելով Սահմանադրական հասարակակարգերը, այն ժամանակ, այսինքն 1909 թ.ի Յուլիս 8ին ամբողջ Պարսկաստանի հետ Ատրպատականն ալ ստնեց ժողովրդական ներկայացուցչական իրաւունքի վերականգնում ու սահմանադրութեան վերահաստատումը։ Եւ քանի որ այդ օրերում Հնչակեան կուսակցութեան Պարսկաստանի շրջանի ժամանակակից Խորհուրդը Ցանձնախումբը Թաւրիզումն էր գտնուում, հետևաբար այդ ստնակատարութեան առթիւ Ատրպատականի կուսակցութիւնը, Նահանգային Անջումէնը և նշանաւոր հերոս՝ Սաթար խանը առանձին նամակներով շնորհակալութիւն են յայտնում նրանից, Հնչակեան կուսակցութեան ցոյց տուած մասնակցութեան և նրա գնահատելի զոհաբերութեան համար։ Իսկ նամակները, որոնց ամեն մէկը պատմական անգին մի փաստաթուղթ է և որոնց ամեն մէկ բառը գալիս է ապացուցելու, որ չէ թէ միայն Հնչակեան կուսակցութիւնը գոյութիւն է ունեցել, այլ նոյնիսկ իր զոհողութիւնովը զօրաւոր սիւնն է դարձել Պարսից Սահմանադրութեան վերահաստատութեան, նրանց թարգմանութիւնը նոյնութեամբ առաջ պիտի բերենք այստեղ։

Ատրպատականի Նահանգային Անջումանից

23 Ռամազան 1327ին (Յուլիս 10, 1909)

Թիւ 2206

Հնչակեան Կուսակցութեան պատուական կազմին.

«Ձեր անկեղծութեամբ լի պատուական նամակը որ ապացոյցն էր այդ պատուական կազմակերպութեան կրած նեղութիւններին և արած անսահման

զոհողութիւններին, նահանգային Անջումանի (ներկայացուցչական ժողով) առաջ կարդացուեց, որի պարունակութիւնը Անջումանի և իր անդամների երախտագիտութեան զգացումները աւելի ևս ամրապնդեց։

«Վստահ եղէք, որ այդ Սուրբ Կուսակցութեան մատուցած ծառայութիւնները եւ ըրած զոհողութիւնները Պարսիկ ազգը ընդհանրապէս իսկ Ատրպատականը մասնաւորապէս չպիտի մոռնայ, որովհետեւ նա կարողացաւ հասկնալ ոսպկի ծանրութիւնը եւ այսպիսի մի փոքրակազմից շրջանի մէջ Պարսիկ մարտիկների հետ ձեռք ձեռքի տուած եւ կողք կողքի կանգնած ամեն գնով եւ մեծամեծ զոհողութիւններով պայքարի արիւնոտ շաւղով առաջացան մինչեւ որ մեր իսկական նպատակը, Սահմանադրութեան վերահաստատումը իրականացրեցին իրանց արեան եւ կեանքի թանգ գնովը միայն։ Սահմանադրութիւն և ազատութիւն, որոնց հովանու տակ ընդհանուրի համերաշխ ապրելու ազատ իրաւունքը ապահովեցիք դուք, և հայոյն երկիրը միապետական վատ բռնութեան ճնշումներից փրկեցիք»։

«Մեր անխախտ հաւատքն է, որ այսուհետև մեր քաջամարտիկ կուռղները՝ մանաւանդ Հնչակեան Կուսակցութիւնը պիտի վայելեն իրանց արիւնոտ նեղութիւնների պտուղը»։

(Մնիք)

Վերոգրեալ նամակի հետ զուգընթացաբար ըստացուած է Ատրպատականի կուսակալի հետևեալ նամակը, որը թարգմանաբար և նոյնութեամբ առաջ ենք բերում հետևեալ տողերում։

Ազգայասական Կուսակցութիւն
10 Բանաց 1327 (Յունիս 1909)

Թիւ 1405

Հնչակեան Կուսակցութեան պաշտական կազմին.

«Ձեր շնորհաւորական նամակը, որ Սահմանադրութեան վերահաստատման առթիւ էիք գրել, ստացայ։

«Այս սուրբ ու ազատարար ոգին չպիտի կարողանայինք ունենալ և այսպիսի փառաւոր ազնիւ կատարութեան ուրախառիթ բոպէների քաղցրութիւնը վայելելու բախտաւորութիւնը չունենայինք թերևս, եթէ այդ քաջակորով մարմինը, Հնչակեան Կուսակցութիւնը իր թանկագին և անգնահատելի զոհողութիւններով իր բաժինը չբերեր ընդհանուր Պարսիկ ժողովրդի զոհաբերութեան մէջ։ Եւ այդ պատճառով իսկ գալիս եմ ի դիմաց ինձ յանձնուած երկրամասի, մեր նախագիտութեան հետ յայտնել նաև մեր խորին շնորհակալութիւնը»։

Կնիք՝ Սազէդ—Սուլթան

Այս նամակների պակասը գալիս է լրացնելու յայտնի հերոս և Պարսկաստանի իսկական ազատարար Սաթար Խանի մի նամակը, որի թարգմանութիւնը ստորև առաջ պիտի բերենք, մէկ կողմից ողնելով նրա մեծ մասը կազմող պարսկական սովորական քաղաքավարական դարձուածքները։

Բանաց 14, 1327 (Յունիս 1909)

Հնչակեան Կուսակցութեան քաջարի եւ պաշտական անդամներին.

«Ձեր շնորհաւորական նամակը, որ լի էր ան-

կեղծ արտայայտութիւններով, ստացայ և չափազանց գոհ եղայ։

«Թէև այս սուրբ և նուիրական տօնի առթիւ ամեն կողմերից անթիւ հեռագիրներ ու նամակներ եմ ստացել, բայց ձեր նամակը իր անկեղծ պարզունակութեամբը առանձին մի ազաւորութիւն թողնեց իմ վրայ և որովհետև նրա ամեն մի տողի անկեղծ արտայայտութիւնը համապատասխանում էր՝ չէ թէ միայն ձեր սրտի և զգացմանց անկեղծութեանը, այլ նոյնիսկ գործերին և դոյց տուած վերաբերմունքին դէպի ընդհանուրի դատը։

Բայց չպիտի մոռանալ, որ այսպիսի հակայական արդիւնք, և այսպիսի մեծ յեղաշրջում ես միայնակս երևան դնել չպիտի կարողանայի առանց ձեր և բոլոր գործող ու մասնակցող տարրերի։ Ըստ որում թոյլ տուէք, որ ես էլ իմ կողմից շնորհակալութիւն յայտնեմ ձեզ և ընդհանրապէս բոլոր քրիստոնեայ մարտիկներին, առանց որոնց զոհողութեան ես չպիտի կարողանայի նրանց շնորհաւորել այսօրուան նուիրական համազգային տօնը։

«Հաւատալով և վստահելով ձեր համերաշխ, հաւատարիմ և զոհաբերող յատկութիւններին ցանկանում եմ մնալ ընդմիշտ հայրենիքիս ֆիդային»։

(Կնիք) ՍԱԹԱՐ

Կարծեմ որ ամեն մարդ ինձ հետ պիտի համաձայնուէր թէ՝ աւելորդ պիտի լինի սրանից աւելի ապացոյցներ բերելու՝ հաստատելու համար որ, Հնչակեան Կուսակցութիւնը իսկապէս գոյութիւն է ունեցել ու այժմ էլ գոյութիւն ունի, և թէ նա մինչ թէ՛ երկրի մէջ, թէ՛ Կովկասում և թէ՛ Պարսկաստանում առանց պլբֆների և աղմուկ-փոթորիկ-

1- ՍԵՐԳՕ ՎԱՐԴԱՆԵԱՆ
2- ԵՓՐԵՄ ԵՐԵՒԱՆՑԻ
3- ԱՐԱՄ ԵՐԵՒԱՆՑԻ
4- ՎԱՀԱՆ Մ. ԲԻՋԱՆԵԱՆ
5- ՊԵՏՐՈՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ
6- ԹԱԴԷՈՍ ՀԱՄԱՏԱՆՑԻ
7- ԻՍՐԱՅԷԼ ՄՈՒԺԱՄԲԱՐՑԻ
8- ԳԱՍՊԱՐ ՀԱՄԱՏԱՆՑԻ

Ս. Դ. Հնչ. Կուսակցութեան Պարսկաստանի Մարտական Խումբի մի մասը որ Պետրոսի խմբապետութեան յաղթական արշաւանք ունեցաւ Ռաշտի մինչեւ Թեհրան

կի գործել է, երբոր այդ բանին պահանջն է ըզգացել, սակայն լուրջ ու չափուած հողի վրայ, որպէսզի զոհողութիւնների արդիւնքը ապահով լինի և դրական։

Այս հանգամանքը միայն մեզ չենք ասում, այլ Պարսիկ ժողովուրդը և նրա պաշտօնական կազմակերպութիւններն են վկայում, այն էլ գրաւոր կերպով, վկայութիւններ՝ որոնք Հնչակեան պատմութեան մէջ պիտի մնան որպէս պատասխան զոյութիւններ ուրացող պարոններին ու նրանց կուսակցութեան։

1909 թ.ի Յուլիս 8ին գահընկէց եղաւ Մոհամէդ Ալի Շահը և նրա փոխարէն գահ բարձրացաւ իր մանկահասակ որդի՝ Սուլթան Ահմէդ Միրզան և վերահաստատեց Պարսկաստանի Սահմանադրութիւնը։ Հնչակեան Կուսակցութիւնը ճիշտ այստեղ լրացած համարելով իր զինուած գործունէութեան միսիան, վճռեց հրապարակից քաշել Հնչակեան զինուորնէրի հետ նաև իր մատակարարած զէնքերը։ Սակայն խմբապետ Պետրոսը, ըստ իր գատողութեան յարմար տեսաւ փոխարէն Հնչակեան կուսակցութեան արած կարգադրութեան հետևելու, ծախել ամէն ինչ Թաւրիզի ակցիզային վերատեսչութեան իւղալի պաշտօնը ստանալու համար, որի շնորհիւ նա թէ և Թէհրանի արշաւանքին մասնակցելու գնաց, որպէս Հնչակեան ընչաւորկ պրոլետար, բայց 1912 թ.ի Յունվարի վերջերում կախաղան բարձրացաւ որպէս Դաշնակցական, այն էլ բարեկեցիկ վիճակում և հարստացած գրութեան մէջ...։

Թէհրանի գրաւումից և սահմանադրութեան վերահաստատումի հետ միասին, երբ Հնչակեան կուսակցութիւնը քաշեց զինուած գործունէութեան

ռոպարէզից և Ռ. Ս. Դ. Բ. կուսակցութեան ուղարկած Վրացիները և զզւանքով հեռացան Պարսկաստանից, այն ժամանակ Թէհրանի ոստիկանապետութեան պաշտօնը յանձնուեց Եփրեմին և ինչպէս Պետրոս Մելիք Անդրէասեանն է ասում իր նամակում «ՀԱՅ ԶԻՆԻՈՐԻ ՄԵԾ ԿԱՐԻՔ ԷՐ ԸՆԴԱՑԻՈՒՄ», և այդ կարիքը լրացրեց Եփրեմը զանազան «ցանկալի» աղբիւրներից . . . և . . . հէնց այդ տեղից սկսեց Դաշնակցութեան պաշտօնական մասնակցութիւնը Պարսկաստանի յեղափոխական կեանքին և Եփրեմի «նապոլէօնանալու» և «Հայ Կարիբալդի» դառնալու շրջանը։

Ասել է Եփրեմը և Դաշնակցութիւնը Պարսկաստանի յեղաշրջող կեանքի կծիկի ծայրը ա՛յն ժամանակ և ա՛յն տեղ ձեռք բերեցին, որտեղ Հընչակեան կուսակցութիւնը յարմար էր տեսել կարել, դադարեցնել և կանգ առնել։

Այս պատմական փաստերը երևան բերելուց յետոյ ուզում ենք հաւատալ, որ մեր հակառակորդները բարեխղճութիւն կունենան նախ՝ յայտարարելու, որ իրանք սխալուել են ուրանալով Հնչակեան Կուսակցութեան գոյութիւնը, երկրորդ՝ դադարեն հայհոյելուց, որ ազնիւ ու մաքուր բան չէ։ Հայհոյելը անտաշ Ասիացու վատ զէնքն է։



Ս. Դ. ՀՆՉ. ԿՈՒՍ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1.— Գործ. Դասակարգը — Ս. Սապահ-Գիւլեան
2.— Հաւսկ — Նոյն
3.— Կարմիր Օրեր — Նոյն
4.— Կղեր. Կրօն, Եկեղեցի — Ս. Ե. Մ. Գեղոմեանց
5.— Առանց հայրենիքի մարդը — Էվերեք Հէյլ
6.— Արեան Ճանապարհով — Գրիգոր Եղիկեան
7.— Հարազատներ — Գրիգոր Եղիկեան
8.— Սաթիրկ — Գրիգոր Եղիկեան
9.— Նորագոյն Սահմանադրական իրաւունքը — Ե. Սաֆօ
10.— Բացառիկ Երիտ. Հայասէրեան
11.— Արեան Ճանապարհն

ԳԻՆ 10 ՍԷՆԳ